

## **ՄԻ ԴՐՎԱԳ ՍՄԻ 1361 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ**

### *Լիդա Սահակյան*

XIV դարի հայ իրականության մեջ հասարակական-քաղաքական կյանքի կարևորագույն երևույթներից մեկը պայքարն էր կաթոլիկության դեմ, որը դարի վերջերին լրջորեն սպառնում էր ոչ միայն հայ առաքելական եկեղեցու շահերին, այլև ազգային սովորույթների ու ծեսերի հարատևմանը: Ինչպես հայտնի է, դավանաբանական պայքարը քողարկվում էր հիմնականում առաջին հայացքից խիստ սխուլաստիկ թվացող երկու հարցերի՝ Քրիստոսի բնության և նրա ծննդյան ու մկրտության շուրջը մղվող բանավեճով: Այս հիմնական հարցերից է, որ բխեցվում էին մյուս մասնակի խնդիրները՝ հաղորդության բաժակին ջուր խառնելը, պահոց օրերին ձեթ կամ ձուկ ուտելը և այլն: Նշենք, որ դեռևս XIV դարի սկզբներից (1307թ.), երբ դադարեց գործելուց հայ-մոնղոլական դաշինքը և Կիլիկյան հայկական թագավորությանը սկսեցին սպառնալ Եգիպտոսի մամլուքներն ու իրենց դաշնակիցները՝ թուրքմեն-կարամանները, Կիլիկիայում հոգևորականության դերը պետական-քաղաքական կառավարման համակարգում բավական ուժեղացավ:

1359 թվականից հայոց կաթողիկոսական աթոռը զբաղեցնում էր Մեսրոպ Ա Արտազեցին, ով եղել է Արտազի թեմի առաջնորդը և Ս. Թադե վանքի վանահայրը: Իր հայրապետական գործունեությամբ պայքարել է կաթոլիկ դիրքորոշման դեմ և պաշտպանել հայ եկեղեցու դավանությունն ու ավանդույթները: Դեռևս Կոստանդին Գ Կեսարացու (1307-1322 թթ.) կաթողիկոսության առաջին տարիներից սկսած՝ 1307 թ. Սսի և 1309 թ. Ադանայի ժողովների<sup>1</sup> լատինամոլ որոշումների պատճառով (Հաղորդության բաժակին ջուր խառնել, Սուրբ Ծնունդը տոնել դեկտեմբերի 25-ին և այլն) հուզումներ էին առաջ եկել Կիլիկիայի ժողովրդի և

<sup>1</sup> Տե՛ս **Ա. Հովհաննիսյան**, Հայոց եկեղեցին Կիլիկյան շրջանում, Երևան, 2018, էջ 149-152, **Գ. Հարությունյան**, Քրիստոնեական եկեղեցիների համընդհանրության գաղափարը Սսի 1307 թ. ժողովում, Հայկազյան հայագիտական հանդես, հ. ԺԴ, 1994, էջ 162, **Մ. Օրմանյան**, Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001, սյուն 2090-2091:

հոգևորականության միջև<sup>1</sup>, իսկ նրա օրոք համազգային դիմադրությունն այնքան էր մեծացել, որ. “Սրօք և բրօք գրեթե պատահելին միմեանց և ոճիրս բազումս գործելին. զի ոմանք պնդելին թէ՛ պարտ է խառնել զջուր ի բաժակն, և այլք թէ՛ պարտ է զանապակն պահել ըստ առաջին սովորութեանն”<sup>2</sup>: Համաձայն Գ. Հարությունյանի՝ Գրիգոր է կաթողիկոսի ծրագիրը հայոց եկեղեցին ինքնամփոփվածությունից դուրս բերելու և համաեվրոպական եկեղեցաքաղաքական հարաբերությունների մեջ ներքաշելու փորձ էր<sup>3</sup>: Մի՞թե նման փորձը լինում է ինքնանպատակ, թե՞ քաղաքական պատճառ ունի: Ինքնանպատակ չերևալու, բայց և քաղաքական պատճառը չտեսնելու համար է որ, Հ. Գաթրճյանը ջրախառնությունը համարում է հայ առաքելական եկեղեցին հարստացնելու միջոց. “...Ծուռ սովորությունը շտկելով Հայաստանեայց եկեղեցին ամենևին բան մը չի կորսունցներ. ջուր չխառնելն արարողութիւն մը չէ, հապա արարողութեան զրկումն է, աղքատութիւնն է. ասով կը վաստըկի հայ ծեսը քան թէ կը կորուսնէ: Հոս փոխելու բան չունի Հայաստանեայց եկեղեցին, հապա աճելու եւ հարստանալու”<sup>4</sup>: Հայ առաքելական եկեղեցին խաչի վրայի ջուրը ընդունում է որպես մկրտության խորհուրդ, իսկ արյունը՝ հաղորդության խորհուրդ:

Կիլիկյան Հայաստանի թուլացումը շարունակվեց նաև XIV դարի 30-50-ական թվականներին, երբ Եգիպտոսի սուլթանությունը և նրանց դաշնակիցները նոր արշավանքներ ձեռնարկեցին հայկական թագավորության դեմ, որի արդյունքում Կիլիկիայի հայ վերնախավը ստիպված էր թշնամուն զիջել մի շարք կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող տարածքներ, այդ թվում նաև երկրի գլխավոր եկամտաբեր նավահանգիստ հանդիսացող Այասը: Ինչ բերաբերում է Քրիստոնյա Արևմուտքին, ապա այդպես էլ որևէ օգնություն չստացվեց:

Նման պայմաններում Կոստանդին IV-ն ու Մեսրոպ Արտազեցի կա-

<sup>1</sup> Ա. Սուքիասյան, Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն (XI-XIV դդ.), Երևան, 1978, էջ 91:

<sup>2</sup> Ա. Մխիթարեանց, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցոյ հանդերձ կանոնադրութեամբք ի պէտս ժառանգաւորաց, Վաղարշապատ, 1874, էջ 139:

<sup>3</sup> Մանրամասները տ»ն Գ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 162: Հմմտ. Մ. Օրմանյան, նշվ. աշխ., սյուն 2090-2091:

<sup>4</sup> Հ. Գաթրճյան, Հիմնական տարբերություն կաթողիկէ և էջմիածնական դաւանութեանց, Կ. Պոլիս, 1864, էջ 274:

թողիկոսը, հիասթափված Ավինիոնի դատարկ խոստումներից, Միս քաղաքում եկեղեցական ժողով գումարեցին, որտեղ չեղյալ հայտարարեցին եկեղեցական միության վերաբերյալ Սսի 5-րդ և վերջինիս միութենական կանոնները հաստատող նախկին բոլոր ժողովների որոշումները ու դատապարտեցին Հռոմի պապի վարքագիծը: Դ. Թինոյանը չի բացառում նաև, որ ժողովը հրավիրված լինի մամլության սուլթանության պահանջով<sup>1</sup>: Սույն հոդվածում քննության ենք առել հետևյալ հարցերը.

1. Երբ է տեղի ունեցել եկեղեցական ժողովը:
2. Ինչ հարցեր են արձարծվել նրանում և ինչպիսի որոշումներ են ընդունվել:

Ս. Բոռնագյանը նշում է, որ ժողովը տեղի է ունեցել 1360 թվականին<sup>2</sup> սակայն ցույց չի տալիս այն աղբյուրը, որից օգտվել է: Իսկ Ա. Սուքիասյանը, խոսելով նշյալ շրջանի քաղաքական ու եկեղեցական դեպքերի շուրջ, ժողովի թվականի մասին լռում է<sup>3</sup>: Ուսումնասիրողների մեծ մասը ժողովն իրավամբ թվագրում է 1361-ով<sup>4</sup>, որին մենք էլ համաձայն ենք: Ա. Մխիթարեանցն սույն ժողովը համարում է 8-րդ-ը՝ տալով նրան “Ութ-

<sup>1</sup> Դ. Թինոյան, Կիլիկիո հայոց թագավորությունը և ինքնիշխան կազմավորումները 1320-1424 թթ., Երևան, 2011, էջ 101:

<sup>2</sup> Ս. Բոռնագյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում XIII-XIV դդ., Երևան, 1973, էջ 779: Հմմտ. Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1976, հ. III, էջ 779:

<sup>3</sup> Տե՛ս Ա. Սուքիասյան, Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, Երևան, 1978, էջ 94-95:

<sup>4</sup> Տե՛ս Ն. Մելիք-Թանգյան, Հայոց եկեղեցական իրավունքը, Շուշի, 1903, հ. Ա, էջ 404, Տ. վրդ. Անապատական, Համառոտ պատմութիւն հայ-լատինական յարաբերութեանց, սկզբէն մինչև 1382, Անթիլիաս-Լիբանան, 1973, էջ 203, Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 779-780, Հայկական սովետական հանրագիտարան, հ. V, Երևան, 1979, էջ 412, Գ. Միքայելյան, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևան, 2007, էջ 476, Ա. Հովհաննիսյան, Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության հարաբերությունները 1250-1375 թթ, Երևան, 2008, էջ 180, Յ. վրդ. Մովսիսեան, Հայ առաքելական Ս. եկեղեցու պատմություն, Էջմիածին, 2008, էջ 249, Ա. Հովհաննիսյան, Կիլիկիայի հայ եկեղեցու և Հռոմի պապական աթոռի հարաբերությունների պատմությունից (14-րդ դարի 40-60-ական թվականներ), “Տարեգիրք” Աստվածաբանության ֆակուլտետի, հ. Ե, Երևան, 2010, էջ 216-221, Գ. Арутюнян, Папство и Киликийское армянское государство во второй половине XIII-XIV вв., (Автореферат канд. Дис.), Ереван 1991, с. 20.

րորդ ժողով ի Սիս վասն չխառնելոյ զջուր ի սուրբ բաժակն” խորագիրը: Այս առիթով նա նաև գրել է. “Ապա Մեսրոպ Հայրապետ ...ջանացեալ խաղաղել զնոսին, առնէ ժողով եպիսկոպոսաց և վարդապետաց աշխարհին Կիլիկիոյ ի Սիս և յետ բազում խորհրդոց և բանից ընդ մէջ մտելոց՝ հրամայէ ամենեցուն միօրինակ վարիլ ըստ առաջնոյ սովորութեանն, այս ինքն անապակ գինեաւ կատարել զխորհուրդ պատարագին...”<sup>1</sup>:

Հ. Շահխաթունյանը գրել է. “... ժողով արար յեպիսկոպոսաց և ի վարդապետաց ի Սիս քաղաքի և արգել զջրախառնութիւնն. և հրատարակեաց ըստ նախնի սովորութեանն անապակ պատարագել”<sup>2</sup>: Այստեղից կարելի է հետևություն անել, որ Սսի ութերորդ ժողովի ուշադրության առարկան ևս հաղորդության բաժակն է եղել:

Այս ժողովի մասին Մ. Չամչյանի և Ա. Մխիթարեանցի<sup>3</sup> դիրքորոշումը գրեթե նույնն է, ինչ Հ. Շահխաթունյանինը: Մ. Օրմանյանը, քննադատելով այդ տեսակետը, գրում է, որ թեև Մ. Չամչյանը գործը միայն բաժակի վրա է մասնավորեցնում, սակայն պետք է հասկանալ, որ խնդիրը լոկ ջրախառն բաժակի վրա չէր կարող ամփոփվել, այլ բոլոր նոր և օտարամուտ ձևերը պետք է միանգամայն վերանային<sup>4</sup>:

Չնայած պատմական տվյալների պակասին, կասկած չի հարուցում այն հանգամանքը, որ այս ժողովում միայն ջրախառնության հարցը չէր քննարկվում, այլ բարձրացված էին բոլոր այն հարցերը, որոնք ժամանակի տարբեր միութենական ժողովների որոշումներով ներմուծվել էին հայոց եկեղեցական ավանդության մեջ: Մյուս կողմից, հավանական է, որ ինչպես նախորդ ժողովներում քննությունը ջրախառնության հարցի վրա էր ծանրացել, այնպես էլ այստեղ նույն հարցը դառնար հիմնական խնդիր: Այս առիթով Սիմեոն Երևանցին գրում է. “Տէր Մեսրոպ յամս ԻԶ, որ եբարձ զջուրն ի սուրբ խորհրդոյն և հերքեաց զախթարմայութիւնն, որ մուծեալ էր ի Հայս ի Կոստանդին հերձուածողէն և յՕշին թագաւորէն”<sup>5</sup>:

<sup>1</sup> Ա. Մխիթարեանց, նշվ. աշխ., էջ 139-140:

<sup>2</sup> Հ. Շահխաթունյան, Ստորոգութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. 1, Էջմիածին, 1842, էջ 209:

<sup>3</sup> Մ. Չամչյան, Հայոց պատմություն, Երևան, 1984, հ. 9, էջ 353-354:

<sup>4</sup> Մ. Օրմանյան, նշվ. աշխ., սյուն 2245:

<sup>5</sup> Սիմեոն Երևանցի, Ջամբռ գիրք որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնակից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս, և իւրոյ շրջակայից վանօրէիցն,

Շնորհիվ ցուցաբերված ազգային աննահանջ դիմադրության և ժողովրդական ընդհանուր դժգոհության՝ հայ եկեղեցում իրագործվում է միարարական որոշումների պաշտոնական հերքումը<sup>1</sup>:

1361թ. Սսի եկեղեցական ժողովի որոշումներով վերջնականապես ձախողվեցին հայերին կաթողիկոսներու պապերի փորձերը: Այս քայլը, որ կրում էր հարկադիր բնույթ, արտաքին քաղաքական ուղղության փոփոխություն էր ենթադրում, որը, սակայն, արդեն էական ոչինչ չէր կարող տալ ստեղծված քաղաքական բարդ պայմաններում: Արդյունքում, Կիլիկիայի հայոց թագավորությանը, որը պարփակվել էր Լեռնային Կիլիկիայի շրջաններով, մնում էր հավասարակշիռ քաղաքականության միջոցով պահպանել եղածը:

1364 թ. Մեսրոպ Ա Արտագեցին հատուկ կոնդակով հիմնել է լեհահայոց արքեպիսկոպոսական թեմը<sup>2</sup>, և փորձ արել բարիդրացիական հարաբերություններ հաստատել հարևան մահմեդական ամիրությունների հետ: 1367 թ. ըստ նրա կոնդակի և Կազիմեժ Մեծի դեկրետի, Լեհաստանի և Վալախիայի (Հս. Ռումինիա) հայ առաքելական եկեղեցու անդրանիկ առաջնորդ է հաստատվել ժողովրդի կողմից ընտրված Գրիգորը<sup>3</sup>: Հարկ է նշել, որ Տիրայր վրդ. Անապատականը Մեսրոպ հայրապետին բնութագրել է որպես “բարեկարգիչ կաթողիկոսի”, ով կարողացել է ամրապնդել հայադավանությունը<sup>4</sup>:

Այսպես, կարող ենք հետևություն անել, որ գրեթե ողջ 14-րդ դարում Կիլիկյան Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքը ներքաշվել էր դավանաբանական պայքարի մեջ, որպեսզի կաթողիկոսի հետ իրականացվեր համատեղ նպատակ և փորձ արվեր դավանաբանական կողմնորոշումը վերածելու իրավիճակը վերափոխող գաղափարախոսության:

---

համաժողովեցեալ և շարագրեցեալ ի Սիմօնէ ցաւահար և վշտակոծ կաթողիկոսէ Երևանցոյ, ի Վաղարշապատ, 1873, էջ 17:

<sup>1</sup> Միարարական շարժման մասին մանրամասները տե՛ս **Լ. Սահակյան**, Էջեր միարարական շարժման պատմությունից, “Տարեգիրք” Աստվածաբանության ֆակուլտետի, հ. է, Երևան, 2012, էջ 144-154:

<sup>2</sup> **Ա. Հովհաննիսյան**, Հայոց եկեղեցին Կիլիկյան շրջանում, էջ 162-163, **Ամենայն հայոց կաթողիկոսներ** (հանրագիտարան), Էջմիածին, 2008, պրակ Ա, էջ 165:

<sup>3</sup> **Քրիստոնյա Հայաստան** (հանրագիտարան), Երևան, 2002, էջ 410:

<sup>4</sup> **Տ. վրդ. Անապատական**, Համառոտ պատմություն հայ-լատինական յարաբերութանց, սկզբէն մինչև 1382, էջ 205:

Սակայն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերոնշյալը պայքարի միայն արտաքին կողմն էր, իսկ բուն նպատակը՝ հայրապետական աթոռների փոխադարձ հարաբերության և առավելագույն ազդեցության խնդիրն էր: Քանի որ թե՛ կաթոլիկ, և թե՛ ուղղափառ եկեղեցին հայ ժողովրդի համար օրհասական պահերին օգնության ձեռք մեկնելու պատրվակով միշտ էլ փորձել են լուծել միության խնդիրը: Միություն ասելով պետք է հասկանալ ոչ միայն դավանաբանական ու ծիսական խնդիրները, այլև իշխանության գերակայության նկրտումները: Քանի որ հույն և լատին եկեղեցիները, հայ հոգևորականությանը առաջարկելով իրենց դավանաբանական տեսակետը, եկեղեցական միության դեպքում հայոց հոգևոր կառույցը ենթարկելու էին իրենց:

Այսինքն միության խնդիրը հայերը, հույները և լատինները տարբեր կերպ էին հասկանում ու մեկնաբանում: Եթե հայերի համար «միությունը» եկեղեցիների միջև փոխադարձ բարեկամական հարաբերությունն էր՝ համահավասարության սկզբունքով, դավանական համերաշխությունն ու համաձայնությունը, հաղորդակցությունն ու հարգանքը (մեր օրերի էկումենիկ շարժման օրինակով), ապա հույներն ու լատինները այն պատկերացնում էին միայն հայ առաքելական եկեղեցին իրենց հոգևոր գերակայության տակ վերցնելու ձևով:

Փաստորեն, Կիլիկիայի արքունիքը և կաթողիկոսարանը եկեղեցակրոնական զիջումների էին գնում ռազմաքաղաքական ակնկալությունների հույսով և փորձում էին հասնել քաղաքական նպատակների իրականացման, այն է՝ ընդառաջ գնալով Կղեմես V-ի պահանջին՝ Եվրոպայից ռազմական օգնություն ստանալ, սակայն, ինչպես ցույց տվեց պատմության ընթացքը, դրանք անիրական նպատակներ էին:

## ОДИН ЭПИЗОД ИЗ ИСТОРИИ ЦЕРКОВНОГО СОБОРА СИСА 1361 ГОДА

*Лидя Саакян*

**Ключевые слова:** *Киликия, государство, политика, дипломатия, Рим, церковь, вероисповедание, уния, собор, Сис.*

Во второй половине 14-го века внешняя политика Киликийского армянского католикосата носила взаимодополняющий характер: ожидание поддержки со стороны европейских стран, и, избежание, в пределах возможного, непосредственного вмешательства католической церкви в духовную жизнь страны.

Однако какой бы последовательной ни была в этом вопросе политика армянского духовенства и светских деятелей, Католической церкви все же удалось распространить свое влияние при дворе Армянского государства Киликии, а также в высших сферах духовенства. А церковный собор, созванный католиком Месропом I Артазеци в 1361 году, отменил решения предыдущих соборов о церковной унии, осудил тщетные обещания папства.

Уступки патриархов армянского государства Киликии имели бы значение, если бы Армянскому королевству удалось миновать опасности с помощью латинян. Однако никакой помощи не последовало. Если бы папы действительно отказались от своих ложных обещаний, армяне искали бы другие пути спасения.

### A PART OF THE SIS CHURCH COUNCIL HISTORY IN 1361

*Lida Sahakyan*

**Key words:** *Cilicia, state, policy, diplomacy, Rome, Church, dogma, union, council, Sis.*

In the second part of the 14<sup>th</sup> century the external policy of Cilician Armenian Catholicosate had a complementary role-the Catholicosate had European support and at the same time it kept its spiritual life away from the direct intervention of the Catholic Church as much as possible. Armenian Church and Secular figures used this policy retrospectively. However, Catholic Church had significant successes and we saw its efficacy both in the palace of the Cilician Armenian State and among Church high ranks. Then the Church council in 1361, organized by Mesrop I Artazeci, did not recognize the Church union decisions before him and condemned the vain promises of papacy.

The concessions of Church fathers of Cilician Armenia was of no value because the Armenian Kingdom did not have assistance from the latins and could not get rid of threats. If the Catholic Church had abandoned the futile promises, the Armenians would have searched for other ways to survive.

-----  
**Լիդա Սահակյան** – պատմ. գիտ. թեկն., ԵՊՀ Ստրվածարանության ֆակուլտետի Հայ եկեղեցու պատմության և եկեղեցարանության ամբիոնի ավագ լաբորանտ

**Lida Sahakyan** – PhD of History, Senior assistant of chair of Armenian Church history and Ecclesiology at the YSU Faculty of Theology

**Лида Саакян** – кандидат исторических наук, старший лаборант кафедры Истории Армянской церкви и Экклесиологии ЕГУ Факультета Богословия